

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈՒՅԱՆ-ԲԱՆԱՍԵՂԾ ՓԱՍՏԱԲԱՆ

13.09.2015 18:58



Փաստաբան Նորայր Հակոբյանը (արտոնագիր 1832), այսօր՝ օգոստոսի 13-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին է նվիրել իր կողմից հեղինակած ‘Երգ՝ առանց մեղեդու՝ բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ արտացոլված են փաստաբան բանաստեղծի ներաշխարհը և իր պատկերացրած կյանքի փիլիսոփայությունը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհակալություն է հայտնել բանաստեղծ փաստաբանին, տեղեկացնելով, որ փաստաբանների պալատը աշխատանքներ է իրականացնում բացահայտելու համար շնորհաշատ փաստաբաններին, ովքեր ստեղծագործական ձիրք ունեն և կա մտադրություն մոտ ապագայում փաստաբանների պալատում ստեղծել ստեղծագործողների համապատասխան ակումբ:

Հ.Գ.

Նոր-Այրի ստեղծագործություններից մի հատված:
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ...

..Բայց ..այգեպանս լավ գիտեմ վաղուց,
Որ կինը միայն տերևն է ծառի
Ու խոր աշնանը լքում է ծառին,
Իսկ ծառը նորից կանաչել գիտի...
2է որ իմ այգում հարյուր ծառ ունեմ...

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })